ԻՆՖՈՐՄԱՑԻԱՅԻ ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ ՀԿ
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի 1/3, 4-րդ հարկ
Հեռ. 56 03 60, Էլ. հասցե foi@foi.am, www.foi.am
FREEDOM OF INFORMATION CENTER NGO
1/3 Buzand street, 4th floor, Yerevan, RA

17.10.2014թ.
224-ի 2

ՀՀ ֆինանսների նախարար
պարոն Գագիկ Խաչատրյանին

Տեղեկատվություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Խաչատրյան,

Ղեկավարվելով ՀՀ Սահմանադրության 27 և 27.1 հոդվածների և “Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի դրույթներով՝ խնդրում ենք տրամադրել հետեւյալ տեղեկությունները.

1. 2014թ.-ի ընթացքում քանի՞ անգամ է վերանորոգվել ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքը (հասցեն՝ Մելիք Ադամյան 1),
2. Յուրքանչյուր վերանորոգման ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության վարչական շենքի ո՞ր հատվածներն են վերանորոգվել.
3. Որքա՞ն գումար է հատկացվել յուրաքանչյուր վերանորոգման համար,
4. Որքա՞ն գումար է ծախսվել (հատկացված գումարից փաստացի ծախսվել 2014թ.-ի հոկտեմբերի 15-ի դրությամբ) յուրաքանչյուր վերանորոգման համար,

“Տեղեկատվության ազատության մասին” ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի համաձայն՝ տեղեկություն ստանալու գրավոր հարցմանը պատասխան տրվում է այն ստանալուց հետո 5-օրյա ժամկետում: Ուստի, խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցումին պատասխանել օրենքով սահմանված ժամկետներում:

Կանխավ շնորհակալ եմ:

ԻԱԿ իրավաբան Գեւորգ Հայրապետյան